

տարիին Յայտնութիւնը, որուն Հայոց թուականը կը փնտռենք, Մեհեկան 24 է, օրը հինգշաբթի: Հաշուենք Արաց 30էն մինչեւ Մեհեկան 24. Կ'ունենանք 25 օր. բազմապատկենք չորսով՝ կ'ունենանք 100 թուականը: 651 տարին՝ նահանջ է ետք երրորդ պարզ տարին է. ուրեմն պէտք է 100էն մէկ թիւ պահանջենք եւ կ'ունենանք 99 թուականը: Ուրիշ բացատրութեամբ. Մեհեկան 24ը իբր Յայտնութեան ամսաթիւ ունեցող տարիները չորս են, որոնց վերջինը նահանջ է նախընթաց երեքը պարզ տարիներ են, եւ իրարմէ կը տարբերին շաբթուան օրերով (դչ. դչ. եչ. ուրբ.), որոնք կարգով իրարու կը յաջորդեն տարուէ տարի: Օրագրութիւն կանոնով, այսինքն՝ իբր մեկնակէտ առնելով 100 թուականի կիրակնօրեան, կը ճշտեմ

հանջի առաջին ամին եւ՝ դ ի բաց երթ, եւ թէ յերկրորդին բ., յերրորդին՝ ա., ի չորրորդ ամին լիով կալ: Ձեռ. թ. 672 (վենետիկ, Ս. Ղազար), Տոմար ԺԹ., թղ. 2ր:

22. Կիրակնօրեան կը դանուի Հայոց տարեթիւին 28ի վրայ բաժանումին մնացորդով: Օրինակ. 100:28=3 եւ մնացորդ 16: Այս 16 մնացորդին կը համապատասխանեն է Ա. դիրերը. որովհետեւ անոնք Հայոց ԺԶ տարին կիրակնօրեան են էին, եւ են նաեւ ճ թուականի, եւ այն

Յայտնութեան օրը²², ուրբաթ. իսկ այն Յայտնութիւնը, որուն թուականը կը փնտռէ՝ հինգշաբթի էր, ուրեմն, 100-1 = 99 է փնտռած թուականս:

Յարզ բացատրեցինք թէ ինչո՞ւ հայկական տոմարի կարգին անցած են Յուլեան ամսանունները, եւ թէ հայկական Մեծ եւ Փոքր թուականները նահանջ տարի ունենալով՝ անշարժ էին եւ չարժողը միայն Հայոց ամսաթիւն էր, առանց օրուան: Կարգն է որ անցնինք հայկական եւ քրիստոնէական թուականներու զուգընթացութեան կանոնին, ՇԼԲ զոյգ բոլորակներու լոյսին տակ, ուր կը պարտադրուին 1064 շարունակալ տարիներու օրացոյցները:

(Շար. 1)

Հ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԳԱՄԵԱՆ

թուականներուն՝ որոնց 28ով բաժանումը 16 մնացորդ կու տայ:

Կիրակնօրեայ դիրերը, Յունուարի մէջ, Հայոց Յուլեան օրացոյցի անփոփոխ կանոնին համաձայն, հետեւեալ կարգն ունին. Յունուար 1 = է, 2 = Զ, 3 = Ե, 4 = Դ, 5 = Գ, 6 = Բ, 7 = Ա (ՏԵ՛ս Սիւրսէլեան, Տոմարագիտութիւն, էջ 57): Արդ, 100 թուականի կիրակնօրեան է ըլլալուն համար, Յունուար 1ը կիրակի է, եւ Յունուար 6ը՝ ուրբաթ:

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԱԹԵՅԻ ԱՄԹԵՅԻ ՄԱՍԻՆ

(ՆԻԻԹԵՐ՝ ԶՆԻՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

Մինաս Աթեցի, նախ Երուսաղէմի Հայոց աթոռակից Պատրիարք (1691-98), յետոյ՝ ընտրեալ Պատրիարք (1698-1704, ընդհատումով մը, դժբախտ պարագաներու ներքոյ)¹, միջին դարու հայ հոգեւորականութեան ամէնէն հետաքրքրական դէմքերէն մէկն է: Անոր մասին զբոսած են՝ ծանօթ պատմագէտ-բանասէրներ՝ Տիգրանեան Հ. Թ. Սարգսեանց, Մկրտիչ Եսայ. Աղաւունի, Արտուրդ Արք. Սիւրմէեան, Աստուածատուր Եսայ. Տէր Յովհաննիսեանց, Մեսրոպ Եսայ. Նշանեան, Հ. Գ. Գալէմբեարեան, Փրոֆ. Հրաչեայ Աճառեան, Լէօ, Հ. Ն. Ակիւնեան եւ Ա. Ալոյզյանեան:

Մեր նիւթէն զուրս ըլլալով անդրադարձումը վերոյիշեալ հեղինակներէն շատերուն գրութեանց, քանի որ անոնք չօչափած չեն Աթեցիի Զնքուշի մէջ անցուցած կեանքն ընդհանրապէս եւ Զնքուշի անոր առաջնորդութիւնը մասնաւորապէս, այս յօդուածով պիտի մատնանշենք միայն վերջին երկուքին՝ Հ. Ն. Ակիւնեանի եւ Ա. Ալոյզյանեանի գրութեանց Զնքուշի վերաբերեալ մասերուն յայտնի սխալները:

Ինչպէս իր անունը կը բացայայտէ, Մինաս վարդապետ՝ Աթեցի (Տիգրանակերտցի) էր: Սակայն Զնքուշի վանքի պատմագիր Տէր Մովսէսէն եւ նոյնինքն Մինաս Աթեցիէն ստորեւ մեր կատարելիք մէջըրբումները ցոյց կու տան՝ թէ Մինաս Աթեցի ի մանկութենէ ղերուած էր Զնքուշ, որդեգրուած Զնքուշի մը

կողմէ, մեծցած ու կրթուած էր Զնքուշի Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքի եւ Ս. Կարապետ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, եղած էր առաջնորդ-վանահայր Զնքուշի եւ իր անձին վրայ պահած էր այդ տիպոսը՝ նոյնիսկ Երուսաղէմի իր պատրիարքութեան տարիներուն...:

Ամէնէն առաջ կարգանք մեր վանքի արժանահատ պատմիչ Տ. Մովսէսի սողերը. (Թորոս Աղբար, Բ. Էն այս և հետագայ մեր մէջքերումները կը կատարենք գրաբարը աշխարհաբարի վերածելով):

«ՌձիԸ (1679) քուականին Մարկոս վարդապետը վախճանեցաւ եւ այդ քուականին (վանահայր-Առաջնորդի) արքունի յաջորդեց իր ձեռնասուն աշակերտը՝ Յամբեցի Մինաս վարդապետը, որ մանկութեան ժամանակ բերուած էր եւ որդեգիր տրուած ուն Շէմսուշի հաշատուրի, որ եւ մտ, իր համեստ բնաւորութեան համաձայն, կրքուեցաւ եւ սորվեցաւ իր ուսուցչին՝ Մարկոս քաջ եպիսկոպոսին փոյ, եւ յետոյ ժառանգեց իր (հոգեւոր) հօր արքունի, եւ յետոյ երթալով Ս. Էջմիածին, 24 տարի նուիրակութեամբ շրջապաշտեցաւ, եւ յետոյ ժառանգեց Կոստանդուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքական արքունի: Այն ատեն Ս. Երուսաղէմ տանելով իր եղբորորդին (սա՛ղիմ որդեգրող հաշատուրի քոռն է)

1. Զնքուշ ծանրանար այս կէտերուն վրայ, մեր նիւթէն զուրս ըլլալով:

Շենֆուշի Յովհաննէսը (վարդապետ), անոր ծայրագոյն վարդապետութեան գաւազանը տալով՝ կը դրկէ իրեն տեղը, Շենֆուշի վանքը: Յովհաննէս վարդապետ գալով կը կառավարէ արքայը, եւ ինքը (Մինաս Ամբեցին) կը վախճանի Ս. Երուսաղէմի մէջ ու կը բազմուի Ս. Փրք-կիչի մէջ, պատրիարքներու կարգին. ան ունի շատ ջանք ու երախտիք վանքին վրայ եւ յիշատակ՝ զգեստներ եւ գիրքեր ու պղնձեղէններ» (Անդ, էջ 458-59, քիւ 20, Յայտնաւորք, Չմբուշ):

Թորոս Աղբարի Հեղինակ Գարեգին վրդ. Սրուանձառանի «անվարժ գրիչ» կոչւած Տ. Մովսէսը երկուստեանէն մը տողերու մէջ խտացուցած է Ամթեցու կեանքն ու դործը: Մեր Տ. Մովսէսին այս տողերը ուղիղ կը համեմատին Ամթեցու վերաբերեալ բազմաթիւ յիշատակարաններու եւ Օրագրութեան հետ, որոնցմէ սխալ հետեւութիւններ են հանած Հ. Ն. Ակիւնեան ու Ա. Ալոյզյանէն:

Իսկ հետեւեալը երկու տուններն են՝ իր ուսուցիչ Մարկոս վարդապետին ձօնած՝ Մինաս Ամթեցու 81 տուն ոտանաւորին, որուն խորագիրը՝ «Ի Մարկոս վարդապետն ասացեալ գովեստ բանի ի Մինասէ» կազմուած է ոտանաւորի առաջին 36 տուններու առաջին տողերուն սկզբնառանձինքն.

«Իմ քաղաքս է Տիգրանակերտ,
Զոր այժմ ասեմ մմա Համիր,
Իսկի չտեսաք ըզմ բարիդ,
Շենֆուշ է մեզ բարեաց առիր:

Զի Բարունույն իմ վարդապետ,
Տէր Մարկոսին եմ աշակերտ,
Աստուածածին, Ս. Կարապետ²
Նոքա իսկ են ինձի վարպետ»:

(Հանդէս Ամս., 1960, Յուլիս-Սեպտ. քիւ 7-9)

2. Աստուածածինը անունն է Չնքուշի վանքին, իսկ Ս. Կարապետը՝ գիւղաքաղաքի եկեղեցւոյն:

3. Տարուցին է սա, Երուսաղէմի Պատրիարք 1645-1671:

4. Յիշուած բոլոր վարդապետները ամէնքն ալ եւ պիտիպոսին եւ արքեպիսկոպոսի կարգ ունէին:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ ՍԵԱԼՆԵՐԸ

Թորոս Աղբար, Բ., ի միջի այլոց, ունի Մինաս Ամթեցու հետեւեալ յիշատակարանը. —

«Յիշեցեմ Շենֆուշի Մարտիրոս վարդապետը եւ անոր աշակերտը Շենֆուշի Յովհաննէս վարդապետը, որ ուսուցիչն է երանելի Աստուածատուրի³, Կիրակոսի, Եղիազար կաթողիկոսի եւ Մարկոս վարդապետներուն, որոնք Տիրոջ քով գնացեր են. ամէնէն ետքը (յիշեցեմ) Յամբեցի Մինաս վարդապետս⁴, Ս. Տանարի քարոզիչներու մուսսոս, որ աշակերտն եմ վերոյիշեալ Շենֆուշի ուսուցչապետ Մարկոսի, որ Եղովիտ երթալու ատեն հանդիպեցանք աւագակներու, որոնք ամէն բաներս եւ գրքերս կողոպտեցին... գրքունեցաւ այս յիշատակարանը Հայոց ՌժժԳ (1664) բուսկանին, երբ Երուսաղէմի Եղիազար վարդապետը կաթողիկոս ձեռնադրուեցաւ. Հալէպ քաղաքին մէջ, Ստյ խաչատուր Կաթողիկոսէն, Սբ. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ (Անդ, էջ 464-65, քիւ 31, Աւետարան, Չմբուշ):

Հանդէս Ամսորեայի վերոյիշեալ (1960, ք. 7-9) թիւին մէջ, Հ. Ն. Ակիւնեան, առաջնորդող յօդուածով մը, 39 սխալակ (19½ էջ) նուիրած է Մինաս Ամթեցու կենսագրականին, տարեգրութեան ձեւով, ուր մէջբերելով վերեւի յիշատակարանի վերջին հատուածը (Մինաս Ամթեցու կողոպտուելը Եղովիտ ճամբուն վերայ), կ'եզրակացնէ. —

«1663/4ին (իմա՝ 1663ին կամ 1664ին) կ'երեւայ քէ Մինաս Եղովիտ փոխադրուած է» (Անդ, սիւն 322):

Բայց ինչո՞ւ, ի՞նչ նպատակով, Մինաս Ամթեցին պէտք է «փոխադրուած» ըլլայ Եղովիտ «1663/4ին»: Եթէ իրրեւ առաջ-

ոմանք եղած են պատրիարք եւ կաթողիկոս, ինչպէս ինքը՝ Մինաս Ամթեցին, որ այս տողերը գրած պահուն արքեպիսկոպոս էր, յետոյ եղաւ Պատրիարք: Նկատելի է վարդապետ տիպոսի այստեղ, եւ այս յօդուածին բոլոր մէջբերումներուն մէջ, գործածութիւնը իր հարազատ եւ ինքնուրոյն՝ քաղաքի իմաստով:

նորդ հասկցնել կ'ուզէ զիտնական բանասէրը, այդ մասին ո'չ իր այդ յօդուածին եւ ո'չ ալ որեւէ այլ տեղ քննադատութեան զիմացող փաստի մը չենք հանդիպիր:

Հասկա ինչո՞ւ զնաց Մինաս Ամթեցին Եղովիտ «1663/4ին», կամ անկէ մի քանի տարի առաջ: Կարեւոր է զիտնալ, թէ Ամթեցին յիշեալ յիշատակարանը գրած է 1664ին, Չմբուշի մէջ եւ Եղովիտ երթալու թուականը յիշուած չէ անոր մէջ: Ուրեմն Ամթեցու Եղովիտ երթալու Հ. Ն. Ակիւնեանի «1663/ին» լոկ ենթադրութիւն մը, եւ անհաւանական ենթադրութիւն մը կը մնայ: Սակայն մեր «ինչո՞ւ» հարցման պատասխանը կը գտնուի Հ. Ն. Ակիւնեանի հետեւեալ պարբերութեան մէջ, զորս գրած է իրմէ մէջբերուած վերոյրեալ տողէն առաջ. —

«Մինաս առ ոտս Մարկոս եպիսկոպոսի (տեղւոր՝ Չնքուշի եւ Չնքուշի վանքին մէջ) ուսաւ եւ արժանի եղաւ ստանալ քէ՝ քահանայական ձեռնադրութիւն եւ քէ վարդապետական գաւազան. այս կը պատահի 1655ին, ինչպէս ցոյց կու տայ Մինասի վարդապետական կնիքը (Երուսաղէմ, ք. 453, Պողարեան ցուցակ Դ., էջ 164)⁵:

«Մինաս այս առիւ գրեց իր ուսուցչին գովքը, երկար տաղաչափականով մը:

«Շենֆուշի անձուկ շրջանակէն դուրս ելաւ Մինաս 1656ին, գնաց Ուռհա, քարոզեց եւ վերադարձաւ...»:

Չնքուշի շրջանակէն դուրս ելաւ»ը, կ'ընդունինք եւ կը չեղտենք անոր «գնաց Ուռհա, քարոզեց եւ վերադարձաւ...»ը, որուն մէջն է մեր «ինչո՞ւ»ին պատասխանը: Բայց նախ «անձուկ»ը:

Եթէ Չնքուշի շրջանակը «անձուկ» ըլլար Ամթեցուն համար, ան 1679ին չէր յօժարեր անոր առաջնորդ վանահայրն ըլլալու: Աւելին: Չէր մերժեր Կարինի պէս լայն շրջանակ ունեցող կեղբորնի մը

5. Վերեւ մէջբերուած երկու տունները կը պատկանին այդ տաղաչափականին, որ 81 տունն է, ինչպէս ըսինք:

առաջնորդութիւնը, զոր «առաջարկած էր իրեն 1685ի Դեկտեմբերին Էջմիածնի Նախապետ կաթողիկոսը» (Սալաւանեանց, «Պատմութիւն Երուսաղէմի», աշխարհութեան վերածեց՝ Մեսրոպ Եպս. Նշանեան, էջ 645), եւ մինչեւ 1703, այսինքն Երուսաղէմի վանքին վրայ հինգ տարի քաղաքէն ետքն ալ, իր վրայ չէր պահեր Չնքուշի առաջնորդ-վանահայրի տիպոսը: Իրողութիւնն այն է, որ 1655ին վարդապետական գաւազան ստանալէն յետոյ, 1656ին սկսեալ, Մինաս Ամթեցին հրաւիրուած է եւ Չնքուշին զացած է ուրիշ քաղաքներ քարոզելու — Ուռհա, Եղովիտ եւ ուրիշ տեղեր ալ վստահօրէն — եւ վերադարձած է Չմբուշ:

Բազմաթիւ փաստեր կան հաստատող, որ Չնքուշին ժիւ. դարուն վարդապետական գաւազան ստացած վարդապետներ (քարոզիչներ) հրաւիրուած են եւ զացած են քարոզելու ո'չ միայն Ուռհա, Եղովիտ եւ Կարին, այլ մինչեւ Կ. Պոլիս: Արդիւ ի Բարձրահայաց Ս. Աստուածածին վանքին մէջ Գարեգին վրդ. Սրուանձառանի ցուցակագրած թիւ 4 Յայտնաւորքի պատմագրութիւնը կ'ըսէ՝ Չնքուշի վանքէն վարդապետական գաւազան ստացած՝ Եղիազար հռոմկլայցի վարդապետին համար — «եւ սա շատ քաղաքներ եւ տեղեր շրջեցաւ, մինչեւ որ իր վարդապետելու (քարոզելու) համար տարածուեցաւ ամենայն երկիր եւ մեծ անուն ու փառք ստացաւ» (Անդ, էջ 400): Ինչպէս Եղիազարը, նմանապէս Չնքուշին վարդապետական գաւազան ստացած Արիստակէս Խարբերդցի վարդապետը (որ Կ. Պոլսոյ մէջ վարդապետարան ալ հիմնած է, աշակերտներ հասցուցած է (Հանդէս Ամսորեայ, 1960, ք. 7-9) եւ Խաչատուր Ատիշցին Կ. Պոլիս հրաւիրուած են քարոզելու: Ուրեմն, որոշ է, թէ 1664էն առաջ Մինաս Ամթեցին Եղովիտ հրաւիրուած է՝ քարոզելու եւ այդ հանդամանքը, ինչպէս պիտի տեսնենք քիչ ետք, իրեն համար եղած է նաեւ Կարեւոր հանգրեւան մը:

Շարունակենք մատնանշել Հ. Ն. Ակի-

նեանի մի քանի այլ ակնյայտ սխալները՝ Մինաս Ամթեցու մասին, Չեքուչի վերաբերեալ:

«1687, Մկրտիչ Զուգայեցոյ օրինակել կու տայ Մինաս՝ Սարգիսի գիրքը թուխտ ՌՃ եւ Զ ամին ի Յունուարի Ժի, հինգերորդ ամի առաջնորդութեան իւրոյ նախագիս թոխտու» (Էջմիածին Բ. 370):

Այս պարբերութիւնը ոչ միայն սխալ է, այլ հակասական, հոգ չէ թէ այդ սխալը պատկանի Հ. Ն. Ակինեանի՝ թէ «Էջմիածին Բ. 370»-ին, զոր մենք տեսած չենք:

Նախ՝ ՌՃ եւ Զ Հայոց թուականը 1657-ին է եւ ոչ թէ 1687-ը: Եւ մենք գիտենք, թէ 1657-ին Մինաս տակաւին երկու տարուան ծայրագոյն վարդապետ էր (քարոզելու գաւազան ունեցող), ինչպէս վերեւ տեսանք, ձեռնադրուած էր 1655-ին, հետեւաբար, չէր կրնար հինգ տարի առաջ (1652-ին) առաջնորդ ըլլալ թոխտու: Գիտենք նաեւ, թէ Մինաս 1656-ին Չեքուչին Ուռհա գացած, քարոզած եւ վերադարձած էր Չեքուչ. ուրեմն, նոյն իսկ գտնուած չէր կրնար ըլլալ թոխտու այդ տարիներուն: Իսկ եթէ ընդունինք, թէ տառասխալի մը հետեւանքով ՌՃ Զ ՌՃ եւ Զի է փոխուած, այսինքն իսկապէս թուականը 1687-ն է, զարձեալ (եւ միշտ Հ. Ն. Ակինեանի վկայութեամբ) գիտենք, թէ 1687-էն հինգ տարի առաջ, 1682-ին Մինաս չէր կրնար առաջնորդ ըլլալ թոխտու, որովհետեւ Ակինեան իր այդ յօդուածին մէջ կը գրէ — «1682 Նոյեմբեր 7-ին Մինաս ՆՈՒԻՐԱԿ (այս եւ հետագայ բոլոր կրկնողովորմաները մերն են) կը կարգուի թոխտուի վրայ, (Էջմիածին) կը հասնի հոն 1683 Փետր. 6-ին եւ կը պաշտօնավարէ մինչեւ 1684 Յունուար 17, ապա կ'երթայ Չեքուչ եւ իր շրջակայքը կը հովուէ»: Ուրեմն Հ. Ն. Ակինեան կ'ընդունի — եւ անկարելի էր չընդունիլ, քանի որ Օրադրութեան 20 էջերը (46-էն 65-ը) այդ կը փաստեն — թէ յիշեալ հինգ տարիներուն, 1682-87, Մինաս Չեքուչի առաջնորդն էր եւ ո'չ թէ թոխտու, ուր որպէս ՆՈՒԻՐԱԿ գտնու-

ած էր միայն 11¼ ամիս (1683 Փետր. 6-էն 1684 Յունուար 17) եւ անկէ գացած էր Չեքուչ, իր առաջնորդական աթոռը...:

Տարօրինակ սխալ մըն ալ սա. —

«Ինձ կը քուի քէ Մինաս մինչեւ 1699 պահած էր Եղոկիայի քեմին առաջնորդութիւնը: Այժմ, երբ հրաւիրուեցաւ Երուսաղէմի Պատրիարքութեան աթոռին, պէտք էր հրաժարէր Եղոկիայի աթոռէն: Եւ որովհետեւ այս միջոցին, երեք տարիէ ի վեր գրաւած էր պատրիարքական գահը Գալուստ Կայծակ Ամասիացին, առաջարկեց անոր Եղոկիայի աթոռը: Տեղի տուաւ Ամասիացին, ինչպէս կը խոստովանի իր երգիծականին մէջ»:

Ներհուն բանասէրի «ինձ կը քուի»-ն անհիմն է:

Առաջին. վերեւ, Թորոս Աղբար Բ. Է-ն մէջբերուած Չեքուչի վանքի պատմագրութենէն (էջ 458-459) տեսանք, թէ Մինաս Ամթեցին Չեքուչի առաջնորդութեան աթոռը ժառանգած էր 1679-ին, եւ 24 տարի նուիրակութեամբ չըջադաշած է, միշտ իր վրան պահելով այդ տիրոջը եւ, 1703-ին, Երուսաղէմ տանելով Չեքուչի Յովհաննէս վարդապետը, անոր ծայրագոյնութեան գաւազան տուած է եւ զըրկած է իր տեղը: Այս ճշմարտութեան վերայ է նաեւ ՕՐԱԳՐՈՒԹԻԻՆԸ («ՌՃԾԲ - 1703 - Ապրիլ 4, Նոր Կիրակի, ի մէջ Սր. Յարութեան Եփեմուշի Տէր Ովանէսին գաւազան հոռու Աստուծով»):

Երկրորդ, նոյնքան յստակ է այն փաստը, զոր կը հայթայթէ Տէր Յովհաննէս սեանց Եպս. («Ժամանակագրութիւն Երուսաղէմի Պատրիարքութեան», էջ 404-414) երկարօրէն նկարագրելով, թէ ինչպէս Գալուստ Կայծակ, ո'չ թէ «երեք տարիէ ի վեր գրաւած էր պատրիարքական գահը», այլ 1697-ին վախճանեալ Յովհաննէս Պատրիարքին մահէն ետք, Կ. Պոլսոյ մէջ ինքզինք Երուսաղէմի Պատրիարք հռչակելով, գաւառները մեկնած է Երուսաղէմի անունով զբամ հանդանակելու. Երուսաղէմ գացած չէ անգամ, եւ անոր այդ չարաչառութեան վրայ, Երու-

սաղէմի միաբանները միաձայնութեամբ Պատրիարք կ'ընտրեն Մինաս Ամթեցին եւ զայն կը հրաւիրեն Երուսաղէմ՝ իր աթոռը զբաղելու: Զայս կը հաստատէ նոյնինքն Հ. Ն. Ակինեանի մէջբերած Երեւանի Թ. 579 Մինաս Ամթեցու (էջ 582) ձեռագիրը «Արդ ի ՌՃԽէ (1698) քուակահին Հայոց եւ պիտակ Մինաս վարդապետ... Եւ յարեւելից տանէն չուեալ հասի ի Կ. Պոլիս (1698 Հոկտ. 24-ին) ըստ խնդրոյ յամենայն քաղաքացոց արգիւ եւ մահնաբով վասն առաջնորդութեան գործառնութեան ընտրեալ գանաթանութիւնը մեր որպէս որ յառաջագոյն խնդրեալ էին եւ մեք եւս վասն այն գործառնութեան կայաք (յ)ումանց եկամտից արանց բազում նեղութիւնս կրեցաք յայսմ ամի: Յետ որոյ կրկին հրաւիրեցաք առաջնորդ ի սուրբ Երուսաղէմի (Անդ, սիւն 329):

Ի դէպ, այս յիշատակարանը կը բացառուի նաեւ, թէ ո'րքան ճիշտ է մեր վանքին պատմագիր Տ. Մոսէսը, երբ կ'ըսէ — «... եւ յետոյ ժառանգեց Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքական աթոռը...» (Թ. Ա. Բ., էջ 459): Յամենայն դէպս, 1698-ը ճանշըրած է գահակալութեան թուական Մինաս Ամթեցու Երուսաղէմի Պատրիարքութեան:

Առ ի հետաքրքրութիւն, Հ. Ն. Ակինեանի սխալած ըլլալու որպէս փաստ, ըստ որեւ ամբողջութեամբ կ'արտասուենք իր ակնարկած «ԵՐԳԻԾԱԿԱՆ»ը. —

«Գալուստ Ամասեան,
Կայծակ կոչի մականունան,
Եկեալ քաղաքն Բիւզանդեան

Անդրեան քարոզէր ժողովրդեան,
նա կացուցին առ առեան,
արարին վեհ սուրբ տանն այն,
... ոմն Մինաս սիրուն հան
խօնայ գէնկին սրբազան
պարծեցաւ ունիմ շատ բան
բազում փող մըսխեալ ունայն
առաւել պետութիւնն յինքեան...
(ս)պառեցաւ եղաւ ունայն,
գի Կայծակն էր բարեկամ,
եկեալ էջմիածնայ տան
եկեալ ի Բիւզանդեան
Գալուստին հետ հաշտութեան
կիւնել հայր, որդի եւ հան.
ումանք անօրէն անբան
անէծ յերկնից ընկալան:
Աւետիք ոմն Եարան՝
Իւր... եւ անպիտան...

Այս անկապ ոտանաւորը Պատրիարքական աթոռ մը առաջնորդական աթոռի մը փոխանակելուն հետ ի՞նչ աղերս ունի: Յետոյ, 1696-1698 Եղոկիա արդէն ունէր իր առաջնորդը՝ յանձին Իզնատիոս վարդապետին: Հետեւաբար, Մինաս Ամթեցին այդ տարիներուն Եղոկիոյ առաջնորդ չէր կրնար ըլլալ: Այս երգիծականը, եթէ որեւէ բան մը փաստէ, այն է, թէ երբ Մինաս Երուսաղէմի Միաբանութեան կողմէ միաձայնութեամբ պատրիարք ընտրուած էր, Գալուստ Կայծակ խոհեմութիւն նկատած էր իր չարաչառութիւններէն հրաժարելու եւ հաշտուիլ իրակառնութեան հետ:

(Շար. 1)

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

6. Այս այն Աւետիք (վարդապետ)ն է, որ յեցած իր կաշտակեր հայրենակից Սատրապամին, Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքութիւնները իր անձին վրայ միացուց եւ Մինաս Ամթեցին

պաշտօնանկ ըրաւ ու երեք չարաթ բանտարկելու եւ չարաթել տուաւ՝ անկէ զբամ պահանջելով...: